

N 01

29. դեկտեմբեր 2014թ

ՀՀ եներգետիկայի և բնական պաշարների
նախարար պարոն Երվանդ Զախարյանին

Հարգելի պարոն նախարար

«ԱՆԻ ԱՊԱՐ» ՍՊ ընկերությունը /գրանցված ՀՀ Շիրակի մարզ գ. Չիթհանքով,
3-րդ փ. տուն 27/ համաձայն Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 48.1 հոդվածի Ձեզ է
ներկայացնում ՀՀ Շիրակի մարզի Ավդրամանի պեմզային տուֆերի հանքավայրի
3-րդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը սահմանված
կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեխնիկական
առաջադրանք ստանալու նպատակով:

Կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերը:

«ԱՆԻ ԱՊԱՐ» ՍՊԸ տնօրեն



Ա. Պողոսյան

հեռ 098 012025

*Հիքալի Նաբո
գ. Չիթհանք
3րդ փող 27բուն*

ՀՀ ԵՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊՈՐՏԱԿ 05/9840/14
«29» 12 2014թ.

Արձանագրություն

ՀՀ Շիրակի մարզի Բազրավանի համայնքում 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ժամը 12:00-ին տեղի ունեցավ «Անի Ապար» ՍՊԸ կողմից ներկայացված Ավդրամանի պեմզային տուֆի հանքավայրի 3-րդ տեղամասի փորձաքննության հայտ ներկայացնելու համար, նախնական համաձայնություն տալու մասին լսումներ:

ՆԵՐԿԱՎ ԷԻՆ

1. Բազրավան համայնքի ղեկավար՝ Ա. Պետրոսյանը
2. «Անի Ապար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արսեն Պողոսյանը:
3. Ավագանու անդամներ՝
Արմեն Պետրոսյան
Գագիկ Գևորգյան
Ջամայնքի բնակիչներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀՀ Շիրակի մարզի Բազրավանի համայնքում նախատեսվող Ավդրամանի պեմզային տուֆի հանքավայրի 3-րդ տեղամասի փորձաքննության հայտ ներկայացնելու համար նախնական համաձայնություն տալու մասին լսումներ:

Չանձնաժողովի նախագահ ընտրվեց Բազրավան համայնքի ղեկավար Ա. Պետրոսյանը:

Ելույթ ունեցան.

1. «Անի Ապար» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Պողոսյանը ներկայացրեց, որ ցանկանում է Ավդրամանի պեմզային տուֆերի հանքավայրի 3-րդ տեղամասում կատարել շահագործման աշխատանքներ օրենքով և օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Բազրավան համայնքի ղեկավար՝ Ա. Պետրոսյանը նշեց, որ հանքավայրը գտնվում է համայնքից 15 կմ հեռավորության վրա, հանքավայրի համար նախատեսված տարածքում բացակայում է բուսականությունը: Համայնքի ղեկավարը կարևորեց հանքավայրի շահագործումը համայնքի սոցիալ – տնտեսական զարգացման տեսանկյունից՝ նշելով, որ շահագործման ընթացքում աշխատողները պետք չափվեն Բազրավան համայնքից:

3. Ելույթ ունեցան նի շարք բնակիչներ և կարևորեցին հանքավայրի դերն իրենց համար: Մասնավորապես նշելով մշխատատեղերի ստեղծումը:

Որոշեցին

1. Եսրնական հավանություն տալ 22 Շիրակի մարզի Բազրազանի համայնքում գտնվող Ավդրամանի պեմզային տուֆի հանքավայրի 3-րդ տնդամասում շահագործման տշխատանքների կազմակերպելուն «Անի Ապար» ՍՊԸ-ին՝ օրենքով և օրենսդրությանը սահմանված կարգով:

Բազրազանի համայնքի ղեկավար՝

[Handwritten signature]

Ա. Պետրոսյան



<< Անի Ապար >> ՍՊԸ-ի տնօրեն

[Handwritten signature]

Ա. Պողոսյան

Ավագանու անդամներ՝

Պետրոսյան Արմեն

[Handwritten signature]

Գևորգյան Գագիկ

[Handwritten signature]



Համայնքի քնակիչներ՝

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՆԻ ԱՊԱՐ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԹԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՎԴԴԱՄԱՆԻ ՊԵՏՁԱՅԻՆ ՏՈՒՅԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ԵՐՐՈՐԴ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ԱՆԻ ԱՊԱՐ» ՍՊԸ
տնօրեն



Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Երևան 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
▪ Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	4
▪ Նախատեսվող գործունեության բնութագիրը	4
▪ Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	5
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	7
▪ Գտնվելու վայրը	7
▪ Ռեյիեֆ, երկրաձևաբանություն	7
▪ Կլիմա	9
▪ Մթնոլորտային օդ	9
▪ Ջրային ռեսուրսներ	9
▪ Հողեր	10
▪ Բուսական և կենդանական աշխարհ	12
▪ Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	12
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	13
▪ Ենթակառուցվածքներ	13
▪ Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	17
▪ Պատմության, մշակութային հուշարձաններ	17
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	18
5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	20

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ

Կարմիր գիրք՝ հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների, բույսերի և սնկերի լրացման, խմբագրման ենթակա ցուցակ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

• *Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը*

ՀՀ Շիրակի մարզի Ավղղամանի պեմգային տուֆերի հանքավայրի երրորդ տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում: Հանքավայրի պեմգային տուֆերի պաշարները հաստատվել են ՀՀ ԲՆ ՕՉՊԳ-ի 20.04.2007թ.-ի թիվ 134 որոշմամբ 527.0 հազ.մ³ քանակությամբ ըստ Ը կարգի:

• *Նախատեսվող գործունեության բնութագիրը*

Ավղղամանի պեմգային տուֆերի հանքավայրի 3-րդ տեղամասում օգտակար հանածոյի կազմաբանությունը և հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները թույլ են տալիս դրա մշակումը կատարել բաց լեռնային աշխատանքներով՝ մեկ min97 5.0մ բարձրությամբ աստիճանով, որը բաժանվում է 2.5մ բարձրության ենթաստիճանների: Բացահանքի վերջնական եզրագծում դրանք մարվում են մեկ ընդհանուր աստիճանով:

Մշակման հստակարգի ընտրված պարամետրերով և օգտակար հանածոյի հաստվածքի տեղադրման էլեմենտներով կառուցված բացահանքի եզրագծում ընդգրկված են տուֆերի շուրջ 210.0 հազ.մ³ կորզվող պաշարներ և շուրջ 33.0 հազ.մ³ մակարացման ապարներ:

Բացահանքի վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- առավելագույն երկարություն – 330մ;
- առավելագույն լայնությունը – 110մ;
- առավելագույն խորությունը – 10մ;
- օտարման մակերեսը – 3.3հա:

Հանույթային աշխատանքները նախատեսվում է իրականացնել շուրջտարի, 260 աշխատանքային օր տարեկան, օրեկան մեկ 8 ժամ տևողությամբ հերթափոխով աշխատանքային ռեժիմով: Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 50 տարի:

Բացահանքի արդյունաբերական յուրացման նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ ծավալի լեռնակապիտալ աշխատանքներ՝

- մերձատար ավտոճանապարհի կառուցում,
- աշխատանքային ճակատի ստեղծման համար ապարների հեռացում,
- արտադրական հրապարակի կառուցում:

Բացահանքի բացումը կատարվում է հանքավայրի արևմտյան մասից մերձատար ավտոճանապարհի կառուցմամբ և առաջնային ճակատի ստեղծմամբ:

Հանքավայրի մշակման համար ընտրվում է համատարած, ընդլայնական, մեկ աստիճանով /մինչև 5մ բարձրությամբ/, միակողմանի մշակումով և մակարացման ապարներն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին լցակույտեր տեղափոխումով մշակման համակրգը: Աստիճանը մշակվում է 2 զուգահեռ աշխատող ենթաստիճաններով: Մշակման համակարգի պարամետրերն են՝ ենթաստիճանի բարձրությունը – մինչև 2.5մ; աստիճանի թեքության անկյունը (աշխատանքային և մարված)– 900; աշխատանքային հրապարակի լայնությունը – 20մ:

Մակարացման ապարները մոտ 33.0 հազ.մ³ ծավալով ներկայացված են հողաբուսական շերտի հետ խառը էլյուվիալ առաջացումների շերտով և ներքին մակարացման ապարներով:

Բացահանքի լցակույտ առաջացնող ապարները ընդամենը 169710մ³ ծավալով տեղադրվում են արտաքին լցակույտում՝ բացահանքի արևմտյան եզրագծի մոտ:

• **Նախագծման նորմատիվ-իրավական հենքը**

Արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է քիսպահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (01.11.1994թ.),

- «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (23.11.1999թ.),
- «Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (03.04.2000թ.),
- Հայաստանի Հանրապետության «Հողային» օրենսգիրք (02.05.2001թ.),
- Հայաստանի Հանրապետության «Ջրային» օրենսգիրք (04.06.2002թ.)
- «Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգիրք» ՀՀ օրենք (01.01.2012թ.),
- Հայաստանի Հանրապետության «Անտառային» օրենսգիրք (24.10.2005թ.),
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (09.08.2014թ.) :

• *Գտնվելու վայրը*

Ավդրամանի պեմզային սուֆերի հանքավայրի 3-րդ տեղամասը վարչատնտեսական առումով գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Անիի տարածաշրջանում, Խարկով գյուղից 6-6.5 կմ դեպի հարավ-արևմուտք, Ավդրամանի լքված բնակատեղից մոտ 1.0-1.2 կմ հարավ-արևելք: Այն տեղակայված է ՀՀ Պետական սահմանի հարևանությամբ, Ախուրյան գետի ձախ ափին: Տեղամասի մոտակա բնակավայրերն են ք. Մարալիկը, Պեմզաշեն ավանը, Խարկով, Անիպեմզա, Բագրավան և Հայկաձոր գյուղերը, որոնց հետ հանքավայրի շրջանը կապված է ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով: Մոտակա ե/գ կայարանը Բագրավանն է, որը գտնվում է Երևանից 112 կմ հեռավորության վրա:

• *Ռելիեֆ, երկրաձևաբանություն*

Շրջանը գտնվում է Արագածի հրաբխային գանգվածի արևմտյան լանջերին, Շիրակի դաշտավայրի հյուսիսային մասում: Մորֆոլոգիական տեսակետից շրջանի տարածքի հյուսիսային և արևմտյան մասերը հարթավայրային են, իսկ կենտրոնականը իրենից ներկայացնում է բլրային տարածք: Ռելիեֆին բնորոշ են հանգած հրաբուխների կոնաձև բլուրներն ու առանձին լավային հոսքերը, կտրատված ոչ խորը և ջրագուրկ ձորակներով: Հետախուզված տեղամասը գտնվում է 1500-1515մ. բազարձակ բարձրությունների վրա:

Արագած լեռան գանգվածը իրենից ներկայացնում է 2800-3200մ բարձրությամբ սարավանդ՝ 4 ժայռոտ գագաթով: Դրանց մոտից սկիզբ են առնում 5-6կմ երկարությամբ սրակատար բլրաշարեր՝ բաղկացած լավային հոսքերից և փխրաբեկոր ժայռուկներից: Սարավանդն ունի թույլ թեքությամբ ալիքավոր ռելիեֆ:

Շիրակի զոգավորությունը նեոգեն-չորրորդական զոգածալքային-գրաբենային բարդ կառուցվածք է՝ տրոհված բազմաթիվ երիտասարդ խզումներով:

Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 1 և 2-ում:

